ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում նէպի տարիներին *(1921—1936)*, *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1978, 305 էջ։*

Հայաստանում նէպի շրջանի պատմության հարցերը քանիցս եղել են մեր պատմաբանների ուշադրության կենտրոնում։ Չնայած առկա են մի շարք ուսումնասիրություններ, Գ. Գեղամյանի մենագրությունը նոր խոսք է խնդրո առարկա պրոբլեմի ուսումնասիրության բնագավառում, խոսք, որը հեղինակն ասել է բաղմապլանային հետազոտության հիման վրա, հարցի քննական մոտեցմամբ։

Աշխատության ներածականում հեղինակն ուղղակիորեն գրում է, որ իր նպատակն է «հետազոտել Հայաստանում նէպի կենսագործմամբ սոցիալիզմի կառուցման պատմությունը, ցույց տալ նրա ընդհանուր օրինաչափություններն ու տեղական առանձնահատկությունները, գտնելով, որ այն իր քաղաքական-դաստիարակչական նշանակությունից բացի, օգտակար կլինի այդ պրոբլեմով հետագայում զբաղվողների համար» (էջ 22)։ Առաջ անցնելով ասենք, որ հեղինակն իր առջև դրված խնդիրը հաջողությամբ է լուծել։

Բավական չէ, որ պատմաբանն ընդունի սոցիալիզմի կառուցման գործում օբյեկտիվ օրինաչափությունների համընդհանրությունը և առանձնահատկությունների անխուսափելի լինելը։ Այս ճշմարիտ դրույթը հաստատում կստանա միայն մի դեպքում, երբ օրինաչափն ու առանձնահատուկը կքննարկվեն փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ։ Այսպես էլ վարվում է Գ. Գեղամյանը, ցույց տալով, որ նէպի տարիներին Հայաստանում սոցիալիզմի կառուցման պրակտիկայում ի հայտ են եկել տեղական առանձնահատկությունները։ Սակայն այդ առանձնահատկությունները, որպես մասնավորություններ, կուսակցության հմուտ քաղաքականության շնորհիվ ճիշտ կիրառում են ստացել միասնական ինտերնացիոնալ խնդրի լուծմամբ։

Ուշադրության է արժանի նէպի պերիոդիզացիայի հարցը, որը ռազմական կոմունիզմի քաղաքականությունից մեկուսացված հարց չէ։ Ահա թե ինչու հեղինակը խնդիրը քննարկում է այդ երկու քաղաքականության համադրման եղանակով, փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ, Միության մասշտաբով ընդհանրապես, Հայաստանի առումով՝ մասնավորապես։ Հարձակում և նահանջ, ռազմական կոմունիզմի քաղաքականություն և նէպի քաղաքականություն։ Հեղինակը ցույց է տալիս, որ միմյանց հակադիր այս երկու քաղաքականությամբ կուսակցությունն ըստ էության նույն նպատակն է հետապնդել՝ բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման նպատակը։ Այս առումով և միայն այս առումով է հեղինակը գրում, որ սպառված քաղաքականության «սխալներն ուղղելուն և երկիրը ճգնաժամային վիճակից դուրս բերելուն ուղղված քաղաքականությունը նահանջ համարելը ճիշտ չէ» (էջ 11)։ Ինչ խոսք, հեղինակը նէպի երկակի բնույթը, նահանջ և հարձակում, մեխանիկորեն միմյանցից չի անջատում, այլ քննում է փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ։ Կապիտալիստական տարրերին զիջումներ անելու և նրանց զարգացումը սահմանափակելու շրջանը ներկայացվում է որպես սոցիալիզմի ամբողջ ճակատով հարձակման համար պոտենցիալ ուժերի կուտակման շրջան։ Եվ պատահական չէ, որ հեղինակը նէպի կենսագործումը մեր երկրում բաժանում է երկու փուլի. նահանջի և ուժերի վերախմբավորման շրջան (1921—1929 թթ.) և ամբողջ ճակատով հարձակման շրջան (1930—1936 թթ.)։ «Այսպիսի բաժանումը,— իրավացիորեն նշում է հեղինակը,— ...հնարավորություն է տալիս նէպը դիտելու իր զարգացման ու փոփոխման պրոցեսում, որը շատ կարևոր է գիտական ուսումնասիրության համար» (էջ 12)։

Անդրադառնալով Հայաստանում ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու պատմության շարադրմանը, հեղինակը ցույց է տալիս, որ ռազմական կոմունիզմի քաղաքականությունը Հայաստանում կիրառվել է շուրջ չորս ամիս՝

1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. ապրիլը կիրառվել է առանց պատմական կոնկրետ պայմանները, երկրի առանձնահատկությունները հաշվի առնելու։ Ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը Հայաստանում առանց տեղական առանձնահատկությունները հաշվի առնելու, պարզ է, որ պետք է դրսևորեր իր բացասական կողմերը։ Հեղինակը Հայաստանի օրինակով մեկ անգամ ևս բացահայտել է այն հայտնի ճշմարտությունը, որ ռազմական կոմունիզմի քաղաքականությունն անցողիկ, պատմական որոշակի պայմաններից բխող քաղաքականություն է, և որ պարտադիր չէ այն կիրառել բոլոր երկրներում, որոնք թևակոխում են կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու փուլը (էջ 27)։ Հեղինակը չի ժխտում ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառման անհրաժեշտությունը Հայաստանում, սակայն նա դնում է, որ «բռնագրավումների քաղաքականությունը պետք է կիրառվեր միայն կուլակային տնտեսությունների, վաշխառուների և սպեկուլյանտների նկատմամբ» (էջ 37), այսինքն՝ պետք է դրսևորվեր դասակարգային խիստ մոտեցում։

Գ. Գեղամյանն աշխատության մեջ պատշաճ տեղ է հատկացնում Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակից, պատմական կոնկրետ պայմաններից բխող առանձնահատկությունների վերլուծությանը։ Խոսելով ռազմական կոմունիզմի քաղաքականությունից նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու պատմական անհրաժեշտության մասին, հեղինակը չի սահմանափակվել ընդհանուր դրույթների շարադրմամբ։ Մեթոդոլոգիական ճիշտ դիրքերից ելնելով, նա ընդհանուր օրինաչափությունների մեջ է քննում մասնավորը, առանձնահատուկը։ «Ամենակարճ ճանապարհով սոցիալիզմ կառուցելու, «ճակատային գրոհի» քաղաքականությունն արդեն սպառել էր իրեն և օբյեկտիվորեն սկսել էր խանգարել սոցիալիստական շինարարության առաջընթացին» (էջ 38)։ Այդ առաջընթացը չկասեցնելու համար, շարունակում է զարգացնել իր միտքը հեղինակը, նէպի կիրառման առաջին շրջանում անհրաժեշտ էր մեր երկրում սոցիալիստական շինարարությունը տանել ոչ թե կապիտալիզմի մնացորդների վերացման, այլ աշխուժացման, մանր արտադրության ոչ թե վերակառուցման, այլ բազմակողմանի զարգացման միջոցով (էջ 41)։ Եվ այնուհետև հեղինակը փաստական խոսուն նյութերի խոր ու համոզիչ վերլուծությամբ ապացուցում է, որ նէպը Հայաստանի համար առավել քան միակ հնարավոր քաղաքականությունն էր հանրապետության սոցիալիստական շինարարության գործում։

Անդրադառնալով սոցիալ-տնտեսական այս կամ այն բնագավառի փոփոխությունների հարցին, հեղինակը նախ. և առաջ բացահայտում է այդ փոփոխությունների առանձնահատուկ կողմերը, որը ինչ խոսք, բարձրացնում է աշխատության գիտական արժեքը։ Հայտնի է, օրինակ, որ Միության առումով 1921—1925 թթ. եղել են ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներ։ Հեղինակը ցույց է տալիս, որ Հայաստանում տնտեսության վերականգնման ու վերակառուցման աշխատանքները ավելի քան միահյուսված են եղել։ Ինչպես ամենուր, այնպես էլ Հայաստանում վերականգնումը սկսվել է գյուղատնտեսությունից, սակայն առանց ագրարային հարցի լուծման գյուղատնտեսության վերականգնման մասին խոսք լինել չէր կարող։ Ագրարային հարցն էր այն գլխավոր օղակը, որից բռնելով կարելի կլիներ ձգել ողջ շղթան ու ապաքինել երկրի քայքայված գյուղատնտեսությունը։ Խնդրի լուծումն ամենուր պարտադիր էր, սակայն տեղական առանձնահատկություններից ելնելով՝ եղանակները տարբեր։ Այսպես, վկայակոչելով Վ. Ի. Լենինին, հեղինակը գրում է. «Եթե ռուսական գյուղը... 1921 թ. գարնանը համահարթվել և հիմնականում միշտակացել էր, ապա հայկական գյուղը... տառապում էր համատարած աղքատության մեջ...։ Եթե Ռուսաստանում նէպին անցնելու նախօրյակին հիմնականում ագրարային հեղափոխությունը ավարտվել էր, ապա Հայաստանում այն միաժամանակ պիտի կատարվեր» (էջ 51)։ Պարզ չէ՞, որ ագրարային հարցի այս առանձնահատկությունը իր կնիքը պետք է դներ գյուղատնտեսության վերականգնման հարցին առնչվող բոլոր խնդիրների լուծման վրա։ Եվ ինչո՞ւ միայն գյուղատնտեսության. նա իր կնիքն էր դնում նաև գյուղի դասակարգային շերտավորման պրոցեսի ու պայքարի վրա, երևան բերելով առանձնահատկությունների նորանոր դրսևորումներ։ Այս ամենը իրենց համակողմանի լուսաբանումն են ստացել գրախոսվող աշխատության համապատասխան բաժիններում։

Այնուհետև, գյուղատնտեսության բնագավառում ծայր առած առանձնահատկությունների այս շղթան չէր կարող չթափանցել նաև ինդուստրացման բնագավառը։ «Սովետական Հայաստանի ինդուստրացման հիմնական, կարևոր առանձնահատկություններից մեկը այն էր...,— նշում է հեղինակը,— որ լինելով գերազանցապես գյուղատնտեսական երկիր, նրա արդյունաբերությունը շնչին տեսակարար կշիռ ուներ, և եղածը չէր կարող ելակետ ծառայել նրա զարգացման համար։ Այդ իսկ պատճառով սովետական հանրապետությունների եղբայրական օգ-

նությունը..., որը բխում էր լենինյան աղդային քաղաքականությունից, մեր հանրապետության տնտեսական և սոցիալիստական դարդացման անհրաժեշտ պայմաններից մեկն էր» (էջ 78)։ Այս տեսանկյունից է հեղինակը քննում ու լուսաբանում Հայաստանի ինդուստրացման պատմությունը։ Բերված իրողությունները բավարար են ցույց տալու համար, որ հեղինակը Հայաստանում նէպի տարիներին աեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունների պատմության քննությունը չի սահմանափակել սոսկ ընդհանուր դրույթներով։

Ելնելով լենինյան դրույթներից, նա փորձել է վեր հանել թե՛ տեղական տարբերությունները, թե՛ տնտեսական կացութաձևի առանձնահատկությունները, թե՛ կենցաղային ձևերը, թե՛ բնակչության պատրաստականության աստիճանը, թե՛ այս կամ այն պլանն իրականացնելու փորձերը, որպեսզի այս բոլորը արտացոլվի Հայաստանում սոցիալիզմի ուղու առանձնահատկության մեջ։

Աշխատությունը դիտական առումով շահեկան է նաև մեկ այլ տեսանկյունից։ Պատմության առաջընթացի օբյեկտիվ շարադրմամբ հեղինակին հաջողվել է բացահայտել Կովկասի կոմունիստ ընկերներին Վ. Ի. Լենինի գրած ծրագրային նամակի բովանդակության հեռահար իմաստը, առաջադրված դրույթների խոր դիտականությունը։ «Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ... Ահա թե ինչ է հարկավոր հասկանալ և կարողանալ իրականացնել ի տարբերություն մեր տակտիկայից»[1], ահա Կովկասի կոմունիստ ընկերներին Վ. Ի. Լենինի տված տակտիկական գլխավոր խորհուրդը։ Հեղինակը իր առջև դնելով նէպի տարիներին Հայաստանում սոցիալ-տնտեսական փոփոխությունների բազմապլանային խնդրի լուսաբանումը, դրանով իսկ լուսաբանել է Վ. Ի. Լենինի ծրագրային նամակում առաջադրված դրույթների նյութականացման պատմությունը։ Հեղինակը չի դումարդել սոցիալիզմի կառուցման պատմությունը Հայաստանում. այն շարադրված է նվաճումների ու բացթողումների, լույսի ու ստվերի համադրման եղանակով։ Ի դեպ, հեղինակը պատմության լույսն ու ստվերը, նվաճումներն ու բացթողումները մեխանիկորեն միմյանցից չի անջատել, այլ բացահայտել է թե՛ մեկի և թե՛ մյուսի երևան գալու օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները։ Չի ստացվել այնպես, որ Հայաստանում սոցիալիզմի կառուցման գործում ի հայտ եկած թերություններն առանձնահատկությունների արդյունք էին, իսկ նվաճումները՝ սոցիալիզմի կառուցման օբյեկտիվ օրինաչափությունների դրսևորում։ Ո՛չ, հեղինակն առանձնահատուկի և օրինաչափի միջև դերերի նման մեխանիկական բաշխում չի կատարում։ Նա հարցը քննում է կապակցության մեջ, ցույց տալով, որ այս կամ այն խնդրի լուծման գործում առանձնահատկությունների ճիշտ հաշվառումը նպաստել է սոցիալիզմի կառուցման գործին, իսկ անտեսումը՝ խոչընդոտել։

Հայաստանում սոցիալիզմի կառուցման գլխավոր օղակների՝ ինդուստրացման, կոլեկտիվացման, կուլտուրական հեղափոխության, ինչպես նաև այդ ամենի հիմքի վրա տեղի ունեցած դասակարգային տեղաշարժերի ու սոցիալ-տնտեսական այլևայլ վերափոխությունների դիֆերենցված պատմության լուսաբանման հարցերով զբաղվել են հանրապետության տարբեր պատմաբաններ։ Գրախոսվող մենագրության հեղինակը այդ ամենից ծաղկաքաղ չի անում գումարելիների պարզ գումարը ստանալու համար։ Նա փորձում է բացահայտել սոցիալիզմի կառուցման բոլոր օղակների միջև եղած անքակտելի կապը, սոցիալիզմի կառուցման գործում նոր տնտեսական քաղաքականության խաղացած դերը։

Մի քանի վրիպումների մասին։ Աշխատության 37-րդ էջում հեղինակը գրում է. «...հիմնավորված չի կարելի համարել պատմական գրականության մեջ իշխող այն տեսակետը, թե «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառումով էր, որ Հայաստանում ապահովվեց սովետական կարգերի գոյությունը, նրա ամրապնդումն ու հետագա զարգացումը։ Սովետական սոցիալիստական հասարակարգի հաղթանակը,— շարունակում է զարգացնել իր միտքը հեղինակը,— նրա ամրապնդումն ու հետագա զարգացումը մեզ մոտ ապահովվեցին աշխատավորության հերոսական պայքարի և, առաջին հերթին, Սովետական Ռուսաստանի ռազմական ու նյութական օգնության շնորհիվ»։ Միտքը վիճելու տեղիք չի տալիս, սակայն հեղինակը Հայաստանում սոցիալիզմի կառուցման գործում վճռական նշանակություն ունեցող այդ գործոնների կողքին պետք է դներ նաև մեկ ուրիշը՝ կուսակցության ղեկավար դերի նշանակությունը։

Մի դիտողություն ևս։ Հեղինակը իր աշխատության 184-րդ էջում գրում է. «որքան երկիրը գյուղատնտեսական է, այնքան ավելի մեծ ու անգնահատելի է ...բանվոր դասակարգի դերն ու նշանակությունը հասարակության սոցիալիստական վերափոխման գործում»։ Մեր կարծիքով

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 404։

անկախ այն բանից երկիրը ինդուստրիալ առումով զարդացած է թե ոչ, հասարակության սոցիալիստական վերակառուցման գործում բանվոր դասակարգի դերը ոչ մի չափով չի նվազում. նա ամենուրեք մեծ է ու անգնահատելի։ Աշխատության նույն էջում հեղինակը խոսելով գյուղատնտեսության վերականգնման, աշխատավորության նվազագույն պահանջմունքների բավարարման, բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման գործում նէպի կարևորագույն դերի մասին, միաժամանակ նշում է, որ «նէպը... սոցիալիստական արդյունաբերության զարգացման և կապիտալիստական շրջապատում, մեկ առանձին երկրում սոցիալիստական հասարակարգ կառուցելու հիմնական նախապայմանն էր»։ Ինչ խոսք, դժվար է գերագնահատել նոր տնտեսական քաղաքականության դերը սոցիալիզմի կառուցման գործում մեկ առանձին երկրում վերցրած։ Սակայն հեղինակի նման ձևակերպումը ընթերցողների մոտ կարող է ստեղծել այն թյուր կարծիքը, որ նէպը պիտանի է միայն կապիտալիստական շրջապատման մեջ գտնվող մեկ առանձին երկրի համար, բայց ոչ նաև այն երկրների համար, որոնք միայնակ չեն կապիտալիստական շրջապատման մեջ և ստանում են սոցիալիզմի հզոր լագերի տնտեսական, քաղաքական, անհրաժեշտության դեպքում նաև՝ ռազմական աջակցությունը։

Նման օրինակները, որոնց թիվը կարելի է ավելացնել, բավ չեն կարող ստվեր դցել աշխատության վրա, նսեմացնել նրա գիտական արժեքը։ Այդ օրինակները, որպես մասնավոր վրիպումներ, ուղղակի անհամեմատելի են աշխատության կուռ տրամաբանության ու կառուցվածքի հետ։

ԱԼԲԵՐՏ ՄԿՐՏՉՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ, Երևանի զարգացումը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, *փաստաթղթերի ժողովածու, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1978, 491 էջ։*

Երևանի պատմությունը լուսաբանվել է առանձին մենագրություններում և ավելի հանգամանորեն ու գիտականորեն վեր է հանվել հենց իր՝ բազմավաստակ պատմաբան Թ. Հակոբյանի, եռհատորանոց ծավալուն աշխատության մեջ։ Սակայն քաղաքի պատմության փաստաթղթերն ու վավերագրերը, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, ամբողջական ձևով առ այսօր չեն հրապարակվել։ Ներկա ժողովածուով Թ. Հակոբյանն առաջին քայլն է կատարում այդ բացը վերացնելու ուղղությամբ։ Նա ժողովածուում զետեղել է համարյա բացառապես արխիվային չհրապարակված կարևորագույն փաստաթղթեր։ Այդ նյութերը նա հավաքել է Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Երևանի պետական կենտրոնական պատմական արխիվներից, ՍՍՀՄ ռազմապատմական պետական կենտրոնական արխիվից, ինչպես նաև Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանից ու Հայաստանի պատմության թանգարանից։

Հեղինակը, ինչպես և պետք էր սպասել, ժողովածուում տեղավորել է բազմաթանակ նյութերից միայն այն փաստաթղթերն ու վավերագրերը, որոնք ավելի արժանահավատ են և ավելի ամբողջական լույս են սփռում այս կամ այն հարցի վրա։ Այդ նյութերը նա դասավորել է ըստ թեմատիկայի և ժամանակագրական կարգով, ամփոփելով քաղաքի քաղաքական պատմության, վարչական վիճակի, տնտեսական ու հասարակական կյանքի, սոցիալական և աղատագրական-հեղափոխական շարժումների, մշակութային կյանքի և այլ բաժիններում։ Հեղինակը պահպանել է փաստաթղթերի ու վավերագրերի բնագրային լեզուն, իսկ ծանոթագրությունները տվել է բուն տեքստում, առնելով դրանք փակագծերի մեջ։

Թ. Հակոբյանի կազմած ներկա ժողովածուն մի հիմնական նպատակ ունի՝ ցույց տալ Երևանի զարգացումը Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացումից մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն ընկած ժամանակամիջոցում։ Ասենք անմիջապես, որ նա հասել է իր նպատակին։ Հեղինակի հրապարակած նյութերը պատմում են այն փորձերի մասին, որոնք ձեռնարկում էին ռուսական զինվորական իշխանությունները Երևանը գրավելու ուղղությամբ։ Նրանք ցույց են տալիս, թե ինչպիսի հերոսությամբ էին կռվում ռուս զինվորները և ինչպիսի արիությամբ էին օգնում նրանց հայերը։ Փաստաթղթերը մերկացնում են արևմտաեվրոպական երկրների հակառուսական գործունեությունը Պարսկաստանում և Արևել-